ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
“Ազգագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ”

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ**
**Բաց Բաժնետիրական Ընկերություն**
**ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am**
**Հաշվետվություն թիվ 117, 02.06.2016թ.**

| | | | |
|---|---|---|---|
| տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ | բաժնետոմս, | պարտատոմս | պարտատոմս |
| արժեթղթերի քանակը՝ | 1,277,501 հատ, | 40,000 հատ | 240.000 հատ |
| արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ | 5,000 ՀՀ դրամ, | 10,000 ՀՀ դրամ | 25 ԱՄՆ դոլար |

*“Մենք՝ սփորագրող անձինք, հավասփիացնում ենք, որ հաշվեփվությունում ներառվող փեղեկությունները ճշգրիփ և սփույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փասփաթղթի ամբողջականությունը”:*

ստորագրող անձինք՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| **Կարեն Հակոբյան** | **Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ** | | 02.06.16 |
| **Զարուհի Մելքոնյան** | **Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ** | | 02.06.16 |
| **Սուրեն Կարապետյան** | **Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ** | | 02.06.16 |
| **Տիգրան Գալստյան** | **Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ** | | 02.06.16 |
| **Բագրատ Ճգմաչյան** | **Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ** | | 02.06.16 |
| **Դավիթ Հարությունյան** | **Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ** | | 02.06.16 |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| **Աշոտ Օսիպյան** | **Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն** | | 02.06.16 |

02 հունիսի 2016 թ.

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից արժեկտրոնային պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու մասին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2016 թվականի հունիսի 1-ի թիվ 10/01Լ-Հ որոշում (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի որոշումը կցվում է):

Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 Էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

ք. Երևան

Կոդ: ՈՐԽ 0102- N 10/01L-Հ
Դաս: ՀՊ
«01» հունիսի 2016թ.

## ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված $21^6$-ի 1-ին մասի ժզ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության 12.1. կետի ժը) ենթակետը, ինչպես նաև քննարկելով Հայաստանի Հանրապետությունում թողարկված կորպորատիվ պարտատոմսերի շուկայի վերլուծությունը՝ Բանկի Խորհուրդը

### Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Թողարկել պարտատոմսեր 400,000,000 (չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, 40,000 (քառասուն հազար) հատ, 24 (քսանչորս) ամիս մարման ժամկետով, տարեկան 13.0 (տասներեք) տոկոս եկամտաբերությամբ, արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ արժեկտրոնային պարտատոմսեր:

2. Տեղաբաշխումն իրականացնել անվանական արժեքով բաց բաժանորդագրությամբ՝ Բանկի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով: Տեղաբաշխումը սկսել 2016 թվականի հուլիսի 11-ին ժամը 09:00-ին և ավարտել 2016 թվականի հուլիսի 22-ին ժամը 16:00-ին:

3. Մինչև սույն որոշման 2-րդ կետում նշված ժամկետի ավարտը բաժանորդագրության ենթակա պարտատոմսերի քանակը լրանալու և հետ կանչվող հայտերի բացակայության դեպքում Բանկը դադարեցնում է բաժանորդագրության գործընթացը:

4. Արժեկտրոնային եկամտի վճարման փոխանցումը կատարել վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշվարկային հաշիվներին:

5. Պարտատոմսերի մարման փոխանցումը կատարել Բանկի կողմից տեղաբաշխման ավարտի օրվանից հաշվարկած 24 (քսանչորս) ամիս անց: Մարման գումարի փոխանցումը կատարել պարտատոմսերի մարման օրվան

նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշվարկային հաշիվներին:

6. Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2015 թվականի հունիսի 03-ի թիվ 11/01Լ որոշմամբ հաստատված «Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման և սպասարկման կարգ»-ին համապատասխան:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝ Բարսեղ Բեգլարյան

Իսկականի հետ ճիշտ է՝
Աշխատակազմի ղեկավար՝ Մ.Ուզունյան